ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4421-2021 գրությամբ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 18.03.2021թ. գրության հիման վրա 25.03.2021թ. թիվ 26/26-1/4421-2021 գրությամբ նախաձեռնել է «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սույն թվականի փետրվարի 18-ին հրապարակված «Համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և ավտոմատային հեռախոսային կայանների սարքերի» ձեռքբերման «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև մեր կազմակերպությունը՝ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն: Հայտերի բացման ժակետը սահմանվել է ս.թ. փետրվարի 26-ին ժամը 11:15-ին: Հայտերի բացումից հետո 10-րդ աշխատանքային օրը՝ մարտի 12-ին, Ընթացակարգի քարտուղարը +374 99 098 809 հեռախոսահամարից զանգահարել է «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ում նշված հեռախոսահամարին՝ +374 60 688 788, և հայտնել, որ անհրաժեշտ է ներկայացնել Հավելված 1.1-ի շտկված տարբերակը: Ընկերության աշխատակիցները զանգի մասին անմիջապես տեղեկացրել են ընկերության տնօրեն Վարդան Մխիթարյանին, ով նույն օրը, ժամը 14:17-ին զանգահարել է նույն +374 99 098 809 հեռախոսահամարին՝ հասկանալու համար ինչ շտկման մասին է խոսքը, քանի որ ոչ մի ծանուցում «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն չի ստացել: Քարտուղարը հեռախոսով հայտնել է, որ Հավելված 1.1-ում արձանագրվել են անհամապատասխանություններ և, որ պետք է ներկայացվի շտկված տարբերակը, հակառակ դեպքում «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Նույն օրը՝ ապրիլի 12-ին, ժամը 14:43-ին, Վարդան Մխիթարյանի էլեկտրոնային հասցեից Ընթացակարգի հրավերում նշված քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկվում Հավելված 1.1-ի շտկված տարբերակը, ինչը երևում է նաև Պատվիրատուի կողմից Ձեզ ներկայացված սքրինշոտում, և նույն ժամին՝ 14:43-ին տնօրենը նորից զանգահարում են քարտուղարին՝ ճշտելու համար ստացել են շտկված տարբերակը, թե ոչ: Այնուհետև ստանում ենք ծանուցում, որ նախաձեռնվել է «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված գրության մեջ նշված է, որ Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները, բայց մասնակիցը արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել և հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի հայտը: Սակայն կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից ևս առկա սքրինշոտը փաստում է միայն մասնակցի կողմից շտկումը ս.թ. մարտի 12-ին ուղարկած լինելը, և չկա որևէ

սքրինշոտ, որը կփաստի Պատվիրատուի կողմից ս.թ. մարտի 10-ին մասնակցին ներկայացած ծանուցման մասին:

Հաշվի առնելով, որ գնման Ընթացակարգը էլեկտրոնային եղանակով է իրականացվում, հրավերի 1-ին մասի 8.9 կետում հստակ նշված է, որ գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում դրա մասին մասնակցին պետք է տեղեկացնեն համակարգի միջոցով: Մինչդեռ համակարգի միջոցով «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցում չի ստացել: Անգամ եթե Պատվիրատուն տեղեկացնում է, որ ուղարկել է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունների շտկման ծանուցումը, թեկուզ և ոչ համակարգի միջոցով, այլ մասնակցի հայտում նշված էլեկտրոնային հասցեին (ինչը նույնպես ապատեղեկատվություն է և չի համապատասխանում Ընթացակարգի Հրավերով սահմանված պայմաններին, այնուամենայնիվ), հայտնում ենք, որ նման ծանուցում Պատվիրատուն մասնակցին նույնպես չի ներկայացրել: Եղել է միայն հեռախոսազանգ՝ ս.թ. մարտի 12-ին, ինչը արդեն ներկայացրել ենք տվյալ գրությունում:

Հայտնում ենք նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 3-րդ նիստի արձանագրությունը, որը կցված է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի գրությանն ուղղված ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանին, որում նշված է, որ «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ, և որ վերջինիս հայտը մերժվել է, հրապարակված չէ տեղեկագրում և վերջինիս բովանդակությանը մենք ծանոթացել ենք տվյալ գրության 1-ին պարբերության մեջ նշված գրության առդիր փաստաթղթերից:

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է 75-ը, ստացվում է, որ գնահատող հանձնաժողովը հայտերը գնահատելու համար ուներ 15 աշխատանքային օր և ամենաուշը հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ մարտի 22-ին, պետք է տեղեկագրում հրապարակված լիներ հանձնաժողովի բացման և գնահատման նիստի արձանագրությունը և ուղարկվեր հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին: Փոխարենը մարտի 26-ին տեղեկագրում հրապարակվել է գնահատող հանձնաժողովի 4-րդ նիստի արձանագրությունը, այն էլ միայն հայերեն լեզվով, որում արդեն տեղեկացվում է ընտրված մասնակիցների հետ պայմանագիր կնքելու որոշման և անգործության ժամկետ սահմանելու մասին, իսկ «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի մասին որևէ նախադասություն առկա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հայտնում ենք հետևյալը.

- Հաշվի առնելով, որ չկա որևէ հավաստող ապացույց, առ այն, որ մարտի 10-ին «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին ներկայացվել է շտկման ծանուցում,
- Հաշվի առնելով, որ տեղեկագրում չկա հրապարակված արձանագրություն, որում նշվում է, որ մասնակցի հայտը մերժվել է,
- Հաշվի առնելով, որ «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին չի ուղարկվել հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը,
- Հաշվի առնելով, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների հայտերի գնահատման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգով նախատեսված ժամկետները,
- Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Ընթացակարգի շրջանակներում չպահպանելով Կարգով սահմանված մի շարք պահանջները, չի պահպանվել նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված հետևյալ սկզբունքը՝ միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով գնման գործընթացի կազմակերպումը,
- Հաշվի առնելով, որ մասնակիցը գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվում է իր գործողությունների կամ անգործության հետևանքով, իսկ վերոշարադրյալում Դուք ակնհայտ տեսնում եք, որ բացակայում են այդ հանգամանքները,

Ուստի խնդրում ենք Ձեզ կայացնել անաչառ որոշում և «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել:

Միաժամանակ խնդրում ենք, քանի որ Պատվիրատուի գրությամբ ներկայացված հիմնավորումը և մեր կազմակերպության կողմից ներկայացված դիրքորոշումը էականորեն տարբերվում են իրարից, մեր կազմակերպությանը տալ հնարավորություն նիստի միջոցով ներկայացնելու կից դիրքորոշումը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/78 ընթացակարգի շրջանակներում 05.04.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.03.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ծածկագրով գնման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Մասնակից): Հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի՝ հայտով ներկայացված հավելված 1.1-ում նշված չէ մասնակցի անվանումը, նշված հավելվածը թվային էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված չէ, ինչպես նաև բացակայում են ապրանքների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը):

Գնահատող հանձնաժողովն առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: Մասնակիցն արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չի շտկել: Հաշվի առնելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը մերժել է «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը:

Կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/78 ընթացակարգի շրջանակներում 05.04.2021թ. ժամը 09:50-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և ավտոմատային հեռախոսային

կայանների սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ում նշված չի եղել մասնակցի անվանումը, բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը և բացակայել են ապրանքների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 10.03.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

7. Նույն արձանագրության համաձայն՝ 16.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները չեն քննարկվել, քանի որ պահանջված շտկումները ներկայացվել են սահմանված ժամկետի խախտմամբ և որոշում կայացրել «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4421-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2021թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների

ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես

իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար համակարգչային տեխնիկայի օժանդակ մասերի և ավտոմատային հեռախոսային կայանների սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.03.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ում նշված չի եղել մասնակցի անվանումը, բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը և բացակայել են ապրանքների տեխնիկական բնութագրերը (ապրանքների ամբողջական նկարագրերը):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ մասնակցին առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 10.03.2021թ. ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընկերության կողմից որպես շտկում ներկայացված փաստաթուղթը Պատվիրատուին ուղարկվել է 12.03.2021թ.:

Նույն արձանագրության համաձայն՝ 16.03.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկումները չեն քննարկվել, քանի որ պահանջված շտկումները ներկայացվել են սահմանված ժամկետի խախտմամբ և որոշում կայացրել «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ ***<u>հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է</u>***

<u>նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:</u>

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով <u>ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:</u>***

Ընդ որում՝ Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***<u>Հակառակ դեպքում տվյալ</u>*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Անդրադառնալով «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված փաստական հանգամանքներին, մասնավորապես. «…գնահատման արդյունքում մասնակցի հայտում անհամապատասխանություններ արձանագրելու դեպքում դրա մասին մասնակցին պետք է տեղեկացնեն համակարգի միջոցով: Մինչդեռ համակարգի միջոցով «Մ Վ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանութոյունների մասին ծանուցում չի ստացել: Անգամ եթե Պատվիրատուն տեղեկացնում է, որ ուղարկել է մասնակցին արձանագրված անհամապատասխանությունների շտկման ծանուցումը, թեկուզ և ոչ համակարգի միջոցով, այլ մասնակցի հայտում նշված էլեկտրոնային հասցեին (ինչը նույնպես ապատեղեկատվություն է և չի համապատասխանում Ընթացակարգի Հրավերով սահմանված պայմաններին, այնուամենայնիվ), հայտնում ենք, որ նման ծանուցում Պատվիրատուն մասնակցին նույնպես չի ներկայացրել: Եղել է միայն հեռախոսազանգ՝ ս.թ. մարտի 12-ին…»՝ հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.04.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/5135-2021 գրությամբ խնդրել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը՝ հնարավորինս սեղմ ժամկետում տրամադրել տեղեկատվություն՝ հետևյալ հարցերի վերաբերյալ՝

1. Արդյո՞ք «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ընթացակարգի շրջանակներում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից Armeps էլեկտրոնային գնումների

համակարգի միջոցով 10.03.2020թ. Ընկերությանն ուղարկվել է հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ ծանուցում,

2. Եթե այո, ապա ի՞նչ ֆայլեր են կցվել նշված ծանուցմանը:

Ի պատասխան վերը շարադրված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 08.04.2021թ. թիվ Ն/26-1/7861-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ հայտնում ենք, որ էլեկտրոնային գնումների համակարգում առկա տեղեկատվության վերլուծությունը ցույց է տալիս, որ ***<u>ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից Մ Վ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ-ի՝ «armeps» համակարգում գրանցած info@toner.am էլեկտրոնային փոստի հասցեով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով 10/03/2020թ. ժամը 19:34-ին ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ նամակ</u>*** (կցվում է)»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չի շտկել, այսինքն՝ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-1/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.03.2021թ. թիվ 26/26-1/4421-2021 գրությամբ «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Մ Վ Սերվիս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**